Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ltn
√ 1739

1999

43938-4.L.

ՍՐԲՈՅ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԻՆ

ՊԻՈՍԻ ԻՆՆԵՐՈՐԴԻ

ԹՈՒՂԹ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ

Յաղագս վարդապետական սահմանի

ԱՆԱՐԱՏ ՅՂՈՒԹԵԱՆ

ՄԱՐԵՄԱՅ

ԱՍՏՈՒԱԾԱՄՕՐ ԿՈՒՍԻՆ

2072
28123-62

ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

1855

2Ք. 1744
1739-40
9-

ԱԶԴ

Սրբազան Քահանայապետն Պիոս Թ նախանձորդ առաքինութեանցն ամենայն իւրոց նախորդաց, յօրէ անտի գահակալութեան իւրոյ սկիզբն արար մեծամեծ գործովքն յանմահական յիշատակս պճնազարդել զէջն եկեղեցապատում վիպաց։ Սակայն նախանձելի ամենայն յետնոցն իւրոց հանդիսացի, և զհիացումն ամենայն դարուց ապագայից յինքն զրաւեցէ, որպէս և արդ զրաւեաց ձայն մի նորա զբիւրաւորաց որդւոց իւրոց զսիրտս, այնու առաւել՝ զի 'ի վեհագոյն գահոյից անտի ուր եդ զնա Հոգին սուրբ և վերաբազմի ընդ Հովանեաւ առաքելապետին Պետրոսի և հեթանոսաց աւետարանչին Պաւղոսի, ամբարձեալ զբարբառ իւր սահմանեաց զանդուգական փառս Երանուհւոյ ՄՕՐ հանուրց մարդկութեանն՝ ընդ անստերիւր վարդապետութիւնս հաւատոյս մերոյ զվարդապետութիւն ԱՆԱՐԱՏ ՅՂՈՒԹԵԱՆ նորա սահմանելով։

Որպէս ինքն սուրբ Հայրապետն յառաքելական թղթի իւրում արտայայտէ՝ ոչ եթէ նորագիւտ վարդապետութիւն ինչ է բանդ և մերոց դանդաղ ժամանակաց հնարք, այլ անդուստ 'ի վերուստ աստուածայայտ է սա ազդեցութիւն, մարգարէահրաշ տեսութիւն, առաքելաւանդ ցոյց, հայրապետական քարոզութիւն, և ամենայն հաւատացելոց իղձ և ուխտ սրտի։ Զոր Տեառն չէր ցարդ կամեցեալ պատուիրանաւ հրամայել որդւոց սրբոյ Եկեղեցւոյ ըստ անքնին իւրոց խորհրդոց, թէպէտ և ընդունէր զընծայութիւն նուիրաց սրտից առ հասարակ։ Այսպէս անսահմանելի իմաստութեան նորա տնօրինեալ զի ըստ պիտոյից հանգամանաց և ժամանակաց և զիպաց՝ և հաւատոցս մերոց լուսափայլեսցին զլուխք, իբրու այն թէ կամեցեալ Աստուծոյ վարժել տակաւ զչափաւոր տեսութիւն մահկանացու մտաց 'ի նկատումն ծովածաւալ լուսոյ աստուածայայտ ճշմարտութեանցն՝ մի առ մի մերկապարանոց եղեալ յանդիման, զոր թերաբաց ինն եցոյց 'ի սկզբան անդ, որպէս զի մի յաճախութեան լուսոյն անբաւական՝ մտացն շլացի հայեցողութիւն։

Զայս յայտ առնեն մեզ կարգք ժամանակաց եթէ ոք երկայնամիտ և սրատեսիլ քննութեամբ անցցէ ընդ հանդէս դարուց յարմատոյ անտի մարդկութեանս մինչև ցժամանակս մեր. կամ առ 'ի շաւիղ ճշմարտութեան ածելով զմոլորամիտսն, և կամ զչահ ճշմարտութեան լուսափայլ ևս կամեցեալ ցոլացուցանել յառաջնորդութիւն 'ի ճշմարտութիւն անդր միակ, յորմէ ամենայն ճշմարտութիւնք առնուն ծագումն։

Զէ մեզ և տեղւոյս յիշատակ առնել աստանօր եթէ որպէս ամենայն ուղղադաւան ժողովուրդք 'ի հնգից մասանց աշխարհի ետուն արձագանգս ուրախութեան բերկրարար բարբառոյ Հօրն հասարակաց մեծին Պիոսի՝ ընդ ամենայն քաղաքս և շէնս, մանաւանդ թէ յիւրաքանչիւր եկեղեցիս և նուաստագունին իսկ 'ի զիւղս մեծահանդէս տօնախմբութեամբ փառս մատուցեալ զոհաբանութեան վասն շնորհին, և նորահրաշ պաշտամամբ մեծացուցանելով զՄԱՅՐՆ Աստուծոյ և մարդկան։ Զայս ամենայն ծանուցին որք զժամանակիս աւանդեն հանուրց զլուրսն։

Իսկ մեր յորդորեալ յորդիսապարտ սիրոյ առ ՄԱՅՐՆ մեր աղբիւր ամենայն շնորհաց, յորս վայելեմք զօրհանապազ, և զրդեալք 'ի բարբառոյ անտի սրբոյ Հայրապետին, որ ցանկայ զի լսելի լիցին հայրական բանք նորա համօրէն սիրասանունդ զաւակացն, փոխեցաք 'ի հայ բարբառ զառաքելական թուղթս. զի հայասեռ սիրտք՝ որ այնու եռանդեամբ բորբոքեալ են միշտ 'ի մեծացուցանել զՄԱՅՐՆ ամէնօրհնեալ, նոր ճարակ զտցեն առաւելագոյն իւրեանց եռանդեան. և զոր 'ի Հարանց իւրեանց սրբոց ոչ սակաւք անաղօտ վարդապետեցին՝ լուիցեն հնչեցեալ ընդ ծաղս տիեզերաց. և փառս մատուցեն հանրախնամ Աւրարշապետին զի և զինքեանս արժանի արար յորդութիւն ՄՕՐ այսպիսւոյ։

ՊԻՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ՍՊԱՍԱՒՈՐ ԾԱՌԱՅԻՑՆ ԱՍՏՈՒԾՈՅ,

Ի ՅԻՇԱՏԱԿ ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆ

ԱՍՏՈՒԱԾ անհասելի, որոյ ողորմութիւն և ճշմարտութիւն էն հանապարհք նորա, որոյ կամք ամենևին է կարողութիւն, և խնամատարութիւն նորա ձկտի ծագաց մինչ 'ի ծագս զօրութեամբ, և դարմանել զամենայն քաղցրութեամբ, նկատեալ 'ի յաւիտենից զաղետալի կործանումն ազգի մարդկան 'ի ստունգանութենէ Ադամայ, խորհրդեամբ՝ որ ծածկեալ էր 'ի յաւիտենից՝ սահմանեաց կատարել զնախկին գործ զիւրոյ բարութեանն անիմանալի խորհրդով 'ի ձեռն մարմնաւորութեան Բանին, որպէս զի մի ընդ հակառակս բարեգութ առաջադրութեան իւրոյ 'ի կորուստ մատնեսցի մարդ վարեալ 'ի մեղս նենգութեամբ չարութեան բանսարկուին, և որ անկանելոցն էր յԱդամն առաջին՝ պանծագոյն ևս երկրորդաւն վերականգնեսցի։ Արդ 'ի սկզբանէ և յառաջ քան զամենայն յաւիտեանս ընտրեաց և կարգեաց Այր Որդւոյն իւրոյ Միածնի զնա, յորմէ յերանաւէտ լրութեան ժամանակաց հանդերձեալ էր մարմին առնուլ և ծնանել. և այնչափ առաւել սիրեաց զնա քան զամենայն արարածս՝ մինչ և 'ի գութս խանդաղատանաց ընդ նմա միայն հաճել։

Այր վասն և զարմանալի իմն օրինակաւ քաջ 'ի բաց քան զամենայն հրեշտակս և քան զսուրբս համօրէն ելից զնա ամենապատիկ շնորհօք երկնաւորք յաստուածութեանն հոսեցեալ գանձարանաց. որպէս զի յամենայն արատոյ մեղաց միշտ ազատ մնացեալ, ամենևին գեղեցիկ և կատարեալ՝ այնպիսի իմն լիութիւն անմեղութեան և սրբութեան բերել նմա յանձին, քան զոր չէ և չէ մարթ իմանալ երբէք յետ Աստուծոյ, և որումն՞ոչ ոք բայց յԱստուծոյ կարող լիցէ հասանել մտօք։ Աստ պէտք էր զի անթերի պայծառութեամբ սրբութեան զարդարեալ փայլեցէ հանապազ, և անդուստ յարատոյ սկզբնական մեղաց ազատ ամենևին յաղթանակ շքեղ կանգնեսցէ ընդդէմ հնոյ օձին Այրն գերապանծ, որում Աստուած Հայր տալ սահմանեաց զՄիածին իւր զՈրդի, զոր 'ի սրտէ իւր հաւասար ծնեալ իբրև զիւր անձն սիրէ, այնպէս զի բնութեամբ մի և նոյն անձն լիցէ որդի և Հօր Աստուծոյ և Կուսին՝ զոր և ինքն իսկ Որդին ընտրեալ կալաւ ըստ գոյացութեանն իւր 'ի Այր, և ծնցի նա՝ յորմէ ինքն զբղխումն ունի։

Ո՛ սկզբնական զայս անմեղութիւն Կուսին փառաւորելոյ համեմատ սքան-

չելի նորա սրբութեանն և գերահրաշ պատուոյ աստուածամայրութեան՝ կաթողիկէ Եկեղեցի որ 'ի Հոգւոյն Աստուծոյ հրահանգեալ հանապազ սիւն և հաստատութիւն է Ճշմարտութեան՝ բազում և պէսպէս օրինակօք պարզաբանեալ յանդիման կացոյց հանապազ և պաշտպանեաց իբր զվարդապետութիւն յաստուածուստ ընկալեալ և բովանդակեալ յաւանդս երկնապարգև յայտնութեանն։ Բանզի եթէ Եկեղեցի ոչ յերկբայս երբէք եղև 'ի պաշտօն և 'ի մեծարանս հասարակաց առաջի արկանել հաւատացելոց զԱստուածամօրն զՅղութիւն՝ ապաքէն ամենայն իրօք վկայեալ հաստատեաց եթէ 'ի վաղնջուց ժամանակաց է վարդապետութիւնս, տպաւորեալ 'ի խորս հոգւոց հաւատացելոց, և ընդ ծագս ուղղափառութեան ջանիւք խնամոյ սրբոց հայրապետաց ծաւալեալ սքանչելապէս։ Եւ արդարև գերապանծ յեղանակաւս առաջի արար նա զՅղութիւն Սրբոյ Կուսին իբրու նոր ինն և հրաշափառ, և օտար ամենևին 'ի ծննդենէ այլոց մարդկան, սուրբ արդարև և պաշտելի. որ զի զսրբոց ևեթ զյիշատակս տօնախմբէ Եկեղեցի։ Այլ ան որոյ և 'ի կարգ հասարակաց աղօթից և 'ի պաշտամունս սրբոյ Պատարագին՝ ընկալեալ Եկեղեցի զբուն իսկ զայնոսիկ 'ի բանից զոր զանստեղծն Խմաստութենէ խօսին Պիրք, և զյաւիտենից ծագումն նորա յանդիմանեն՝ 'ի նախասկիզբն գոյութիւն անդր Կուսին պատշաճեցոյց, որ կանուխ ժամանակաւ 'ի մի և 'ի նոյն վէճիւ ընդ մարդեղութեան Խմաստութեանն Աստուծոյ հաստատեալ էր։

Եւ թէպէտ այս ամենայն որ 'ի հաւատացելոց առհասարակ գոգցես ընկալեալ են՝ քաջ իսկ ցուցանիցեն եթէ զոր փոյթ պնդութեան ընծայեալ իցէ ընդ այս վարդապետութիւն Աստուածընտիր Յղութեան Աբրահամու Հռովմէական Եկեղեցի, մայր և վարդապետ Եկեղեցեաց ամենեցուն, համայն և այնպէս արժան է զի սորին Եկեղեցւոյ մեծապայծառ գործք՝ յականէ յանուանէ յիշատակեսցին, այնու զի մեծ է սորա պատիւ իշխանութեանն՝ որպէս և պարտ և պատշաճ իսկ է, զի կենդրոն է Ճշմարտութեան և կաթուղիկէ միութեան, և 'ի նմա ևեթ անարատ պահեցաւ կրօնիցն վարդապետութիւն, և 'ի նմանէ հարկ իսկ է ամենայն Եկեղեցեաց զհաւատոցն ընդունել կանոն։ Արդ Եկեղեցին Հռովմայ ամենայն իրօք գուն գործեաց հզօրագոյն հնարիւք ուսուցանել, պաշտպան կալ, յառաջ վարել և վրէժխնդիր յառնել հաւատոյ և պաշտման Աստուածընտիր Յղութեանն Աբրահամու։ Զոր և ակն յայտնի և պանծագոյնս վկայեն այնքան մեծամեծ գործք Հայրապետացն Հռովմայ մերոց՝ Լեւոնդայ, որոց 'ի դէմս Գաբրիէլապետին 'ի նմին իսկ 'ի Գրիգոր Աստուծոյ մերմէ աւանդեցաւ հոգ և գերագոյն իշխանութիւն արածելոյ զոչխարս և զգառինս, հաստատել զեղբարս, և ուղղեալ կարգել զհամօրէն Եկեղեցին։

Ապաքէն 'ի փառս մեծ համարեցան՝ Լեւոնդքն մեր առաքելականաւն իւրեանց իշխանութեամբ յեկեղեցւոջ անդ Հռովմայեցւոց հաստատել զհանդէս

տօնի Ընարատ Յղութեան, և յաւելու շքեղազարդել զնա սեպհական կանոնօք ժամակարգութեան և Պատարագի, յորս բացայայտ խոստովանին զառանձնաւոր շնորհս ազատութեանն 'ի ժառանգաւորս յարատոյ անտի, որպէս և զամենայն հնարս 'ի վար արկանէին առ 'ի յորդոր լինել և տարածել առհասարակ զսահմանեալ պաշտօնն՝ ներողութեանցն առատաձեռնութեամբ, և շնորհելով իշխանութիւն զի քաղաքք, գաւառք և տէրութիւնք առնուցուն իւրեանց 'ի Պաշտպանութիւն զԱյրն Ընտուծոյ յանուն Ընարատ Յղութեան. դարձեալ հաստատելով եղբայրութիւնս, ժողովս, և ուխտս կրօնաւորելոց 'ի պատիւ Ընարատ Յղութեան, և կամ վարձս գովութեան հատուցանելով որոց բարեպաշտութեամբ մենաստանս, հիւրանոցս և սեղանս կամ տաճարս կառուցանէին յանուն Ընարատ Յղութեան, և կամ երդմամբ չափ պարտս 'ի վերայ դնէին անձանց բոլանդակ զօրութեամբ պաշտպան կալ Ընարատ Յղութեան Մօրն Ընտուծոյ։ Ու այս՝ մեծաւ խնդութեամբ սահմանեցին զի զՅղութեանն տօնախմբութիւն 'ի նմին աստիճանի և կարգի կալցի Եկեղեցի Հաւատացելոց յորում զՆնդեան Կուսին. և զի ութ օրէ՛ւք կատարեսցեն ամենայն եկեղեցիք, և զօրէն այլոց պատուիրեալ տօնից սուրբ և սա պահեսցի երկիւղածութեամբ, և ամ յամէ 'ի նուիրական աւուր Յղութեան Սրբոյ Կուսին քահանայապետականն անուանեալ մատրանակարգք պաշտեսցին 'ի պատրիարգականին մերում Լիբերեան եկեղեցւոջ։ Ու իրաւ լինելով զի օր ըստ օրէ հաստատութիւն առնուցուն 'ի սիրտս հաւատացելոց հաւատք Ընարատ Յղութեանն Մարիամու, և յորդորեսցի երանդն նոցա մեծարեալ պատուել զՄոյն յղացեալ առանց իրիք սկզբնական արատոյ, մեծաւ բերկրութեամբ շնորհեցին հաւատացելոց զի 'ի Լաւրետանեան գովութիւնն, որպէս և 'ի կանոնական աղօթս սրբոյ Պատարագին հռչակեսցեն զԸնարատ Յղութիւն Տիրամօրն. զի այնու օրինակաւ հաւատոյն վարդապետութիւն 'ի կարգէ անտի աղօթիցն առնուցու հաստատութիւն։ Հուսկ յետոյ և մեր ընդ հետս հոյակապ Լախորդացն մերոց ընթացեալ՝ ոչ թէ միայն հաճ և հաւան գտաք ամենայնի զոր աստուածպաշտութիւն նոցա բարեպաշտութեամբ հաստատեալ էր, այլ և յուշ ածեալ զսահմանադրութիւնս Բ. սեստեայ Պ. ի, մերով իշխանութեամբ կանոն իմն հաստատեցաք 'ի ժամակարգութիւն Ընարատ Յղութեան, և զուարթագին սրտիւ շնորհեցաք զկիրառութիւն նորա ընդ ամենայն եկեղեցիս։

Ու քանզի պաշտամանցն անձուկ իմն կցորդութիւն է ընդ նպատակի նոցուն, և անհնարին է հաստատուն գոլ այնոցիկ ցորչափ միւսանգամ յանստուգից լցէ և յերկբայութեան, յայն սակս և՝ Լախորդքն մեր Բահանայապետք Հռովմայ ամենայն ջանիւք ձգտացուցեալ զպաշտօնն Յղութեան, փոյթ կալան առ նմին բացայայտել ձշդիւ գտակաւ եթէ զինչ նպատակ նորին լցէ և ո՞ր վարդապետութիւն։ Ու արդարև պարզագոյնս և քաջայայտ ուսուցին զի Յղութեան Կուսին

կատարէր տօն, և իբր պատիր և օտար 'ի մտացն Եկեղեցւոյ մերժեցին զկարծիս այնոցիկ որ Համարէին և վարդապետէին՝ եթէ ոչ զՅղութիւնն ինքնին տօնիցէ Եկեղեցի, այլ զսրբագործութիւն։ Սապէս հարկ Համարեցան խստագոյնս և ընդ այնոցիկ վարելոյ որք առ 'ի դերև հանել զՆարատ Յղութեանն Մարիամու զվարդապետութիւն, զանազանութիւն իմն իմացան ընդ նախկին և ընդ երկրորդ վայրկեանս Յղութեան. և սնդէին եթէ արդարև տօնախմբի Յղութիւն Կուսին, այլ ոչ ըստ նախկին այլ ըստ երկրորդի վայրկենին։ Սակ՝ Նախորդք մեր պարտս Համարեցան անձանց ամենայն ոգւով սնդութեան պաշտպանել և յամրի ունել զտօն Յղութեան ամեներանեան Կուսին, ցուցանելով եթէ արդարև նպատակ պաշտամանցն էր բուն իսկ առաջին վայրկեան Յղութեանն։ Ստի ուրեմն և վՀռական այն բանք որով՝ Նախորդ մեր Աղեքսանդր Ի զՀիգրիտ միտս Եկեղեցւոյ զայս ձև օրինակի ընծայէր առաջի.

"Արդարև 'ի վաղնջուց է առ Հաւատացեալս Քրիստոսի բարեպաշտու-
,, թիւնն առ երանեալ Կոյսն Մարիամ Մայր Քրիստոսի. զի Հաւատան եթէ
,, Հոգի նորա անդստին յառաջնոյ վայրկենէ արարչութեանն և Հոսման 'ի մար-
,, մին անդր, յառանձին շնորհաց Աստուծոյ յիշատակաւ արժանեացն Քրիստոսի
,, Որոյ նորա փրկողի զաղգս մարդկան պահեալ ի՞նչ անապական յարատոյ սկզբ-
,, բնական մեղաց, և 'ի սոյն իսկ միտս մեծարեալ պատուեն և տօնիւք Հանդի-
,, սից կատարեն զյիշատակ Յղութեան նորա "։

Եւ 'ի վերջ քան զամենայն փոյթ 'ի մտի եղև՝ Նախորդացն մերոց և խնամք սնդութեան անայլայլակ ամենևին և անյեղլի պահել զայս վարդապետութիւն Նարատ Յղութեան Աստուածածնի, վասն որոյ ոչ միայն ոչ իւիք թոյլ ետուն զի ոք Հակառակ յարիցէ վարդապետութեանս, այլ և յառաջ ևս անցեալ՝ լուսաւոր բանիւք բազում անգամ Հաստատեցին եթէ վարդապետութիւնն որով Նարատ զԱստուածածնն խոստովանիմք զՅղութիւն՝ է և կալեալ է ըստ արժանւոյն Համանձայն պաշտամանցն Եկեղեցւոյ, և վաղեմի յոյժ, և գոգցես իմն Համաշխարհական, և այնպիսի զի Եկեղեցի Հռովմայեցւոց պատշաճաւոր դատեցաւ ծաւալել զայն և պաշտպանել. և արժանի արդարև ընդունելութեան 'ի խորհրդատեսն սուրբ և 'ի մաղթանս Հասարակաց։ Եւ ոչ այսչափ միայն, այլ զի և ամենայն իրօք անխախտելի պահեսցի այս վարդապետութիւն՝ արգելին ամենայն խստութեամբ զի մի ոք իշխեսցէ երբեք Հրապարակաւ և կամ յառանձին Հակառակամարտ կարծեացն մտանել 'ի ջատագովութիւն, և զայնպիսի կարծիս իբրու բազմապատիկ վիրօք կարեվէր իմն կամեցան։ Եւ զի մի այսքան Հոխ բացայայտութիւնք զուր և տարապարտուց ինչ թուեսցին յաչս ոմանց՝ յաւելին 'ի վերայ և վՀիւ Հաստատութեան։ Ոչ այս ամենայն յառաջագրեալ՝ Նախորդն մեր Աղեքսանդր Ի այսու բանիւք բովանդակէ.

,, Ոչ մտաւ ածեալ զի սուրբ Եկեղեցի Հռովմայեցւոց կատարէ Հռչակաւ

„ զտօն Յղութեան Ն՚նարատ և միշտ Կուսին Մարիամու, և առանձին իմն
„ ժամակարգութեան կանոնս երբեմն 'ի սոյն պատշաճեցոյց ըստ բարեպարիշտ,
„ Ջերմեռանդն և դրուատելի սահմանադրութեան զոր հաստատեաց յայնժամ
„ Ն՚ախորդն մեր Քրիստոս Ղ՝, և մեր կամեցեալ ըստ օրինակի Ն՚ախորդացն
„ մերոց Հայրապետացն Հռովմայ արծարծել զգովելի զայս կրօնս բարեպաշ-
„ տութեան և զհանդէս, և զառ 'ի նոյն ընծայեալ պատկանաւորն պաշտօն միշտ
„ անփոփոխ կալեալ 'ի ժամանակէ անտի հաստատութենէն յեկեղեցւոջս Հռով-
„ մայեցւոց, և պաշտպանեալ զբարեպարիշտ եռանդն պատուելոյ և հռչակելոյ
„ զԿոյսն ամենեքեանեալ իբրու պահպանեալ 'ի սկզբնական մեղաց կանխաժամանն
„ շնորհօք Հոգւոյն, և իղձ լինելով 'ի հօտի անդ Քրիստոսի պահել զմիութիւն
„ հոգւոց զօդիւ խաղաղութեան, զթշնամանացն ամենայն և զպարսաւանաց
„ ամոքելով և 'ի բաց զգայթակղութիւնս դնելով, ըստ աղաչանաց առ մեզ հա-
„ սելոց, և ըստ թախանձելոյ նախայիշեալ Ն՚պիսկոպոսաց և ժողովոց եկեղե-
„ ցեաց նոցին, որպէս և Փիլիպպեայ աղքայի և տէրութեանն նորա՝ նորոգեմք
„ վերստին զոր ինչ 'ի Ն՚ախորդացն մերոց 'ի Քահանայապետաց անտի Հռով-
„ մայ և մանաւանդ որ 'ի Քրիստեայ Ղ՝, և 'ի Պաւղոսէ Ն՚, և 'ի Ս՚ն
„ Գրիգորիոսէ սահմանադրութիւնք և հրովարտակք տուեալ եղեն 'ի նպաստ
„ վարդապետութեանն՝ որ հաստատէ եթէ ոգի երանուհւոյ Կուսին Մարիա-
„ մայ յարարչութեան անդ իւրում և 'ի հեղուլ 'ի մարմնի՝ 'ի Հոգւոյն շնորհաց
„ գտաւ զարդարեալ և 'ի սկզբնական յանցանացն նախապահեալ. և 'ի նպաստ
„ դարձեալ տօնի և պաշտամանց Յղութեան Ն՚ստուածամօր Կուսին, որ ըստ
„ այդմ յիշատակեալ վարդապետութեան ընծային, հաստատեմք վերստին և ընդ
„ խստութեամբք պատժոց և պատուհասից բովանդակելոց 'ի սահմանադրու-
„ թիւնն յայնոսիկ հրամայեմք զի պահեսցին։

„ Դարձեալ և որ միանգամ ջան 'ի վար արկեալ հրովարտակացն այնոցիկ
„ և սահմանադրութեանց այնպիսի իմն տայցէ մեկնութիւն, որով 'ի դերև[illegible]ն-
„ ցէ զոր ինչ 'ի վարդապետութիւնն յայն և 'ի տօն և 'ի պաշտօն անդր յառաջ
„ գայցեն նպաստք, կամ որ զվարդապետութիւնն զայն, զտօն կամ զպաշտամունս
„ համարձակեսցի ընդ վիճիւք արկանել, և կամ ընդդէմ այնր վարդապետութեան
„ եթէ ուղղակի և թէ անուղղակի, կամ բաղբաղայիւք իմն քննելոյ եթէ իցէ՞
„ սահմանելի թէ ոչ, կամ ծանօթաբանելոյ և կամ մեկնաբանելոյ աղագաւ ըզ-
„ Գիրս սուրբս կամ զսուրբ հարս կամ զվարդապետս և կամ որ այլ ինչ պատ-
„ ճառանս և առիթ առեալ ժտիցին ընդդիմաբանս ինչ ասել, քարոզել, ձեռնար-
„ կել և վիճել բանիւ և կամ 'ի գրոյ, սահմանելով ուրեք կամ հաստատելով և
„ կամ հաւանութիւնս ինչ 'ի հակառակէն առաջի արկանելով և անլուծանելի
„ թողլով զայն, և կամ որ այլ ամենայն իրօք որ ոչ ընդ միտս անցեալ ինչ իցեն,
„ բայց 'ի պատժոցն և 'ի պատուհասից որ 'ի սահմանադրութիւնն անդ Քրիստ-

„ տեայ Պօղոս գտանիցին, ընդ որովք կամիմք արկանել զայնպիսին, և արկանեմք
„ իսկ առաջիկայ Թղթովքս, հրաման տամք զի սովին իսկ և եթէ յայտարարու-
„ թեամբ անկցի ամենևին յիշխանութենէ անտի քարոզութեան և հրապարա-
„ կական դասախօսութեան, կամ ուսուցանելոյ և մեկնաբանելոյ, և 'ի տալոյ
„ կամ յընդունելոյ վիճակս յընտրութիւնս առհասարակ. դարձեալ զի նովին
„ իսկ գործովն առանց այլոյ ինչ յայտարարութեան կրիցէ զպատուհաս մշտըն-
„ ջենաւորապէս անկարող լինելոյ 'ի քարոզութիւն, 'ի հրապարակական դասա-
„ խօսութիւն, յուսուցանել և 'ի մեկնաբանել, և 'ի պատուհասից աստի ոչ ումեք
„ կարողութիւն իցէ արձակել զայնպիսին կամ շնորհել ներողութիւն, բայց եթէ
„ մեք ինքնին, կամ որ զկնի մեր պայազատեսցեն Հռովմայեցւոցն Պահա-
„ նայապետք, և կամիմք դարձեալ զի և այլովք պատժեսցի պատուհասիւք ըստ
„ մերոյ ակնարկութեան և ըստ հայրապետացն Հռոմայ մերոց Յաջորդաց, որ-
„ պէս առաջիկայիւս այսու 'ի ներքոյ արկանեմք, հաստատելով վերստին զոր ինչ
„ Պաւղոսի Նգ, և Գրիգորի ԺԱնգ սահմանագրեալ են և վճռեալ։

„ Նա զմատեանն յորս վերոյգրեալն վարդապետութիւն, և տօն կամ
„ պաշտօն համաձայն այնմ վարդապետութեան՝ ընդ երկբայութեամբ արկանի-
„ ցին, կամ հակառակ վարդապետութեանդ օրինակաւ իւիք (որպէս 'ի վերոյն
„ ասացաք) գրեսցի կամ ուսուսցի, կամ թէ 'ի գրուածսն և 'ի դասախօսու-
„ թիւնսն գտանիցին ձևք բանից, ճառք, խօսք, և վիճաբանութիւնք հակառակ
„ նոցին և հրատարակեալ իցեն յետոյ ուրեմն քան զհրովարտակն Պաւղոսի Նգ
„ և կամ առ յապայս որով և է օրինակաւ հրատարակեսցին, արգելումք զդոսա
„ ընդ պատժովք և ընդ դատակնքովք որ 'ի ցանկի անդ արգելեալ գրոց. և կամիմք
„ և հրամայեմք զի նովին իսկ գործովն առանց այլ իմիք յայտարարութեան ընդ
„ արգելեալս կալեալ լիցին „։

Այպաքէն ծանօթ իսկ է ամենեցուն եթէ զսոյն զայս վարդապետութիւն Անհիատ Յղութեան Աստուածամօր Կուսին քանիսն խնամովք վարդապետեալ և պաշտպանեալ իցեն ականաւոր եղբայրութիւնք կրօնաւորաց, հռչակաւոր Ճեմարանք աստուածաբանութեան, և վարդապետք ծայրացեալք յաստուածխօսական ներհմտութիւնս։ Պիտեն դարձեալ ամենեքին եթէ զոր փոյթ յանձին բերեալ իցեն կաթողիկէ կրօնիցն Առաջնորդք յայտ յանդիմանութեամբ և յեկեղեցական ժողովս անգամ հրապարակաքարոզ լինել եթէ ամենասրբուհի Կոյսն Մարիամ, Մայրն Աստուծոյ, վասն կանխաժամանն արժանեաց Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի ոչ անկաւ երբէք ընդ սկզբնական մեղաց, այլ յարատոյ անտի սկզբան նախապահեալ ամենևին, վասն որոյ և վսեմագոյն ինն օրինակաւ փրկագործեցաւ։ Հուսկ յետոյ յաւել և զայն՝ որ ծայրագոյնն է յաւէտ և քան զամենայն գերապանծ, զի և Տրիդենտեան ժողովն 'ի գլխովին 'ի վարդապետական վճիռան յաղագս Սկզբնական մեղաց, յորում ըստ սրբոց Գրոցն

վկայելոյ և հարցն սրբոց և աւագագոյն Յոռոմոյ, սահմանեալ եցոյց զի մարդիկ առ հասարակ սկզբնական մեղաց ծնանին ապականեալք, սակայն և հռչակաւ յայտ արար եթէ ոչ յընդարձակութեան անդ վճռոցն իմանայր և զերանելի և զՆարատ Կոյսն Մարիամ զՄայրն Աստուծոյ։ Եւ ահա սովին յայտարարութեամբ շատ իսկ, ըստ ժամանակին և իրացն բերելոյ, յուցին Հարքն Տրիդենտոյ, եթէ ազատ գտեալ էին նա ինքն Կոյսն ամենաբանեալ'ի սկզբնական մեղաց անտի. այր վասն և իմաստուն խորհրդով ասացին եթէ և ոչ մի ինչ'ի սրբազան տառէից և կամ յաւանդութեանց, կամ'ի Հարցն վկայութենէ գոյր բերել որ այսպիսի ձրից Կուսին իւիք ընդդէմ ելանիցէ։

Եւ արդարև հոյակապ յիշատակք պատկառելի հնութեան արևելեան և արևմտից Եկեղեցւոյն ստուգագոյնս վկայեն եթէ սոյն այս վարդապետութիւն Նարատ Յղութեան երանելւոյ Կուսին, որ'ի զգօնամիտ հաւանութենէ, 'ի վարդապետութենէ, 'ի նպաստից և 'ի գիտութենէ և յիմաստութենէ Եկեղեցւոյ և ս.քան զևս պարզաբանեալ հանապազորդ և հաստատեալ, յաղագս ամենայն և 'ի ժողովուրդս ուղղափառութեան աքանչելապէս սփռեալ, եկաց ցանգ Եկեղեցւոջ իբր առ 'ի նախնեաց ընկալեալ, և յինքեան բերող զկնիք աստուածայայտ վարդապետութեան։ Զանգի Եկեղեցին Քրիստոսի հակող պահապան և վրէժխնդիր աւանդելոցն նմա վարդապետութեանց, չփոփոխէ ինչ'ի նոսին, ոչ բառնայ ինչ անտի և ոչ'ի վերայ յաւելու, այլ զվաղեմի վարդապետութիւնն զայնոսիկ զոր տնկեաց հնութիւնն և Հարցն հաւատք սերմանեցին՝ իւրովանն հաւատարմութեամբ և իմաստութեամբ և խնամովք մշակեալ՝ ջան'ի գործ արկանէ ամենայն փութով լուսաբանել, որպէս զի նախկին վարդապետութիւնք երկնաւոր աշակերտութեան և ս.քան զևս'ի յայտ և'ի լոյս եկեալ բացափայլեսցեն, պահելով ընդ նմին և զլրութիւնն և զսեփականութիւն, և միշտ յաճումն եկեսցեն ըստ իւրեանց սեռին, այս է՝ ըստ նոյն մտաց, ըստ նոյն նշանակութեան և ըստ նմին վարդապետութեան։

Եւ արդարև Հարք և Եկեղեցականացն գրիչք՝ հմուտք աստուածային բանից՝ 'ի մատեանսն զոր եկին 'ի գրել 'ի սրբոց տառիցն բացայայտութիւն, և 'ի պաշտպանել զմասունս հաւատոյ և 'ի հրահանգել զհաւատացեալս, ոչ յայլ ինչ այնպէս փոյթք գտան ք.ան ելևելս զմիմեամբք առնելով բազմազան օրինակօք պանծացուցեալ փառաւորել զԿուսին սրբոյ զանճառելի սրբութիւնն և զարժանիս պատուոյն, և զնախապահութիւն նորա 'ի մեղացն առ հասարակ արատաւորութենէ, և զմեծաքանչ յաղթանակ նորա 'ի վերայ դաժան թշնամւոյ ազգի մարդկան։ Որոյ աղագաւ 'ի մեկնել նոցա զբանսն զայնոսիկ՝ որովք անդուստ 'ի սկզբանց աշխարհի աւետարանեալ Տեառն զմեծապայծառ հնարս գթութեան իւրոյ 'ի վերածնութիւն մարդկութեանս, հար տապալեաց զյանդգնութիւն պատրողական օձին, և ամբարձ աքանչելապէս զբնութեանս մերոյ զակնկալու-

թիւն ասելով. Եղից թշնամութիւն 'ի մէջ քո և 'ի մէջ կնոջդ. 'ի մէջ զաւակի քո և 'ի մէջ զաւակի դորա, ուստի նոքա ԵԹԷ սովին այսու աստուածաշունչ պատգամաւք՝ բացայայտ և լուսաւորագոյնս կանխագուշակեցաւ մարդկան Փրկիչն բարեգութ ազգի, որ է Միածին Որդին Աստուծոյ, Տէրն մեր Յիսուս Քրիստոս, և նկարագրեցաւ ամենաբախտ Մայր նորա Մարիամ Կոյս և զոյգ ընդ նմին բացածանուցաւ և Որդւոյն և Մօրն հանգիտագոյն թշնամութիւն ընդդէմ բանսարկուին։ Այսպէս ահա զոր օրինակ միջնորդն Աստուծոյ և մարդկան, Քրիստոս, զմարդկայինս առեալ կերպարան, ջնջեաց զձեռագիրն որ կայր մեզ հակառակ, և յաղթանակեալ բևեռեաց 'ի խաչափայտին, այսպէս և որ սերտ և անխզելի կապանօք շաղկապեալ էր ընդ նմա, ամենասրբուհի Կոյսն, նոսիաւ հանդերձ և ընդ նմա անհաշտ թշնամութեամբ ընդդէմ թիւնաբեր օձին՝ լի յաղթանակաւ ջախջախեաց զգլուխ նորա ամենամնքուրն գարշապարաւ։

Օ մեծապանծ և զսքանչելի զայս յաղթանակ Կուսին և զգերազանց նորա զանմեղութիւն, զմաքրութիւնն և զսրբութիւն, զանշաղախ 'ի հանուրց արատոյ մեղացն մնալ և զամենապատիկ շնորհացն երկնաւորաց և զառաքինութեանցն և զձրից զանհաւասարելի լիութիւն և զմեծութիւն՝ մերթ 'ի տապան անդ՝ Կոյսի նկատեցին Հարք, որ յԱստուծոյ հրամանացն կերտեալ՝ ազատ և անկորուստ 'ի հատարակաց նաւաբեկութեանն եկաց, մերթ 'ի սանդուխսն անդր, զոր առ 'ի յերկրէ ետես Յակովբ ամբարձեալ մինչև յերկինս, և ընդ սանդղամատուանն հրեշտակք Աստուծոյ ելանէին և իջանէին, և 'ի գլուխ անդր նորա ինքնին Տէր հանդուցեալ նստէր. է ուրեք զի 'ի մորենին զոր ետես Մովսէս վառեալ շուրջանակի, և 'ի շառաչիւն բոցոյն անկէզ և անվնաս ամենևին դալարապէզ պահեալ և ծաղիկս արձակէր. և է դարձեալ՝ զի յաշտարակն անվանելի առ 'ի թշնամւոյն զորով վահանք հազար կախին և ամենայն կազմութիւնք զինուցն քաջաց. երբեմն 'ի սարտէզ փակեալ որ անվնաս և անբռնադատ մնայ 'ի նենգութեանց և 'ի դաւանաց։ և այլ երբեմն 'ի լուսափայլ քաղաք Աստուծոյ որոյ հիմունք նորա 'ի լեառն սրբութեան. է զի 'ի վեհափառ տաճարն Աստուծոյ որ զաստուածեանսն արձակեալ ցոլս նշուլից լի է համօրէն փառաւքն Աստուծոյ. և է զի 'ի բիւրաւոր յայլ նմանակերպ օրինակս զվսեմական արժանաւորութիւն Մօրն Աստուծոյ, և զԱնարատ անմեղութիւն նորա, և զսրբութիւնն անշաղախելի յամենայն բծից պանծագոյնս նշանակեալ նկատեցին Հարք։

Ահ 'ի զսոյն զայս Հոխութիւն աստուածայնոց պարգևացն նկարագրելոյ և զսկզբնականն զայն լրութիւն Կուսին, յորմէ ծնաւ Յիսուս, նոքին Հարք զմարգարէին 'ի փոխ առեալ զբարբառ, ոչ այլով իւիք գիտացին փառաւորել զԿոյսն աւգոստատիրուհի, բայց մաքուր Աղաւնի զնա առձայնելով, Երուսաղէմ սուրբ, և գերագոյն Աթոռ Աստուծոյ, Տապանակ սրբութեան, և Տուն զոր շինեաց իւր Իմաստութիւնն Աստուծոյ, և Դշխոյ որ լիացեալ փափկութեամբք և յեցեալ 'ի

սիրելին իւր ամենևին կատարեալ և շնորհագեղ'ի մտաց անտի Արարչին ելանէր սիրելի Աստուծոյ և'ի ստուերէ անգամ մեղաց ամենևին անտխեղծ։ Արարեալ և զայս ինչ խորհրդածեալ Հարց և մատենագրաց Եկեղեցւոյ եթէ Կոյսն երանելի'ի ժամանակին զի աւետարանէր նմա Գաբրիէլ զաստուածամայրութեանն անհասանելի պատիւ, յանուն և'ի հրամանաց անտի Աստուծոյ կոչեցաւ Լի շնորհօք *, ուստուցին եթէ անզուգական այս և շքեղ օրէն ողջունի՝ որ երբէք յականջալուրս չէր եկեալ ուրեք՝ ցուցանէր քաջ եթէ աթոռ երկնապարգև շնորհաց ամենայնի եկաց Մայրն Աստուծոյ, և զարդարեալ պարգևօք աստուածէան Հոգւոյն, նա մանաւանդ գանձարան ինն անբաւելի գտաւ շնորհաց և անդունդք անսպառելի. որպէս զի ոչ անկեալ երբէք ընդ անիծիւք, և միտնջենաւոր օրհնութեան հաղորդակից ընդ Որդւոյն, արժանի եղև լսել Եղիսաբեթէ որ Հոգւովն խօսէր սրբով.

Օրհնեալ ես դու'ի կանայս, և օրհնեալ է պտուղ որովայնի քո։

Աստուստ ուրեմն որչափ պանծալի նոյնչափ ևս միահաւան նոցուն վարդապետութիւն եթէ Կոյսն ամենապատիւ, որում մեծամեծս արար Հզօրն, այնքան ամենապատիկ պարգևօք երկնից Ճոխացաւ, և այնչափ լրութեամբ շնորհաց, և այնու անմեղութեամբ, որպէս զի անպատում ինն սքանչելիք ընծայեցաւ նա Աստուծոյ, նա մանաւանդ սքանչելեաց ամենեցուն սպառուած և արժանաւոր մայր Աստուծոյ, առ նոյն ինքն Աստուած Հուպ մատուցեալ որչափ ինչ եղականի բնութեան իցէ համարձակելի, գերազանց գովութեանց ամենայնի զոր մարդիկ և զոր հրեշտակք համանգամայն կարող են նմա ընծայել։ Եւ առ'ի հանդէս սկզբնական անմեղութեան և սրբութեան Մօրն Աստուծոյ, ոչ'ի կշիռ ևեթ ածեն զնա Հարք ընդ Եւայի մինչ դեռ ևս'ի ծաղկի կուսութեան, անմեղ էր նա և անապական, չև ուրեմն'ի մահաբեր հրապուրանաց նենգաժետ օձին պատրեալ, այլ մանաւանդ և բանիցն և իմաստից զարմանալի յաճախութեամբ նախապատիւ ևս դասեցին քան զնա։ Որ զի՝ հաւանեալ օձին Եւա անկաւ'ի սկզբնական անմեղութենէ անտի, և'ի գերութիւն նորա ընթացաւ. իսկ Կոյսն երանելի օր ըստ օրէ զնախկին պարգևսն աճեցուցեալ, ոչ միայն զի օձին երբէք տեղի ոչ ետ, այլ և աստուածապարգև զօրութեամբն ջախջախեաց ամենևին զզօրութիւն նորա և զբռնութիւն։

* Յոյն սկզբնագիրն κεχαριτωμένη ունի, իբրու թէ ընդհանրական կամ կաղմեալ'ի ընդհանուր զոր Լատինականն նուազութեամբ ինն թարգմանէ gratia plena, այս է լի շնորհօք։ Թուի ինն մերոյ թարգմանչին κεχαρμένη ընթերցեալ յիւրումն օրինակի, որ է բերէրեալ, քանզի ասէ. Ո-բոյ ԼԷՐ ԲԵՐԿՐԵԱԼԴ։ Սակայն ոչ միայն թարգմանութիւնք ամենայն ազգաց, այլ և Որիգենէս ինքնին անդուստ յերկրորդէ դարէ համաձայն այժմու բնագրին κεχαριτωμένη ընթեռնոյր, և սքանչանայր իսկ ընդ գերազանց միտս զոր տայր "ողջոյնն այն որ ոչ ումեք այլ'ի մարդկանէ բերեալ էր երբէք, Մարեմայ ևեթ պահեալ"։ (Ճառ Զ'ի Ղուկ.)

Թարգմանիչն։

Վասն այսորիկ ոչ դլացան երբէք Հարք մերթ Շուշան'ի մէջ փշոց զԱյրն առձայնել զԱստուծոյ, մերթ Նրկիր անապական ամենևին, կուսական, անշաղախ, անարատ, միշտ օրհնեալ. ազատ յամենայն ապականութենէ մեղաց, յորմէ նոյն կազմեցաւ Ադամ, և մերթ ամենամաքուր, ամենաշքեղ, և ամենազուարճ Պրախտ անմեղութեան և անմահութեան և փափկութեան, 'ի նմին իսկ 'ի ձեռացն Աստուծոյ մշակեալ և 'ի դարանակալութեանց ամենայն թիւնալից օձին զգուշացեալ. է զի Պայտ կոչեցին զնա անփուտ յոր մեղացն ուտիճ չեգիտ երբէք դամն. և այլուր՝ Աղբիւր ականակիտ և կնքեալ զօրութեամբ սրբոյ Հոգւոյն. երբեմն աստուածային Ցաձալ, Պանձ անմահութեան, և այլ ուրեք միայնակ և մի միայն Պուստր ոչ մահու այլ կենաց, ոչ բարկութեան այլ'ի շնորհաց բողբոջ, որ ընդ հակառակն հասարակաց անխախուտ օրինաց՝ յապականութեան և յանսուրբ արմատոյ անթառամ վերաբուսեաց շառաւեղ յառանձին խնամոցն Աստուծոյ։ Այլ իբր այն թէ նուազ ինչ էին այսքանի շքեղ օրինակք նմանութեանց, Ճշդագոյնս ևս վարդապետեցին, եթէ ուր զմեղաց բանք իցեն, ոչ է արժան թէպէտ և 'ի հեռուստ՝ մերձեցուցանել զայն 'ի Կոյսն Մարիամ, որում յայն սակս իսկ առաւելագոյն յորդեցան շնորհք, զի բնաւ իսկ յամենուստ յաղթանակ ընդդէմ մեղացն կանգնիցէ. և դաւանեցին՝ եթէ փառաւորեալ Կոյսն վերանորոգող ծնողացն եկաց, կենդանացուցիչ յետնոց, 'ի միջոյ աշխարհի ընտրեալ, 'ի Պարձրելոյն պատրաստեալ ինքեան, և յԱստուծոյ կանուխ ազգեալ մինչ առ օձն բարբառէր, Եդից թշնամութիւն 'ի մէջ քո և 'ի մէջ Կնոջդ, որ ապաքէն ջախջախեաց զթունաբեր գլուխ վիշապին այնորիկ. վասն որոյ հաստատեցին և զայս եթէ նա ինքն ամենաերջանիկ Կոյսն՝ ազատ գտաւ շնորհօք յամենայն արատոյ մեղաց, և 'ի բնաւ իսկ յապականութենէ մարմնոյ, հոգւոյ և մտաց. և քաղաքավարեալ ցանդ ըստ Աստուծոյ, և ուխտիւ յաւիտենից միացեալ ընդ նմա ոչ եղև բնաւ 'ի ստուերս այլ'ի լոյս հանապազորդ, վասն որոյ և ամենևին իսկ վայելչայարդար բնակարան եկաց Քրիստոսի, ոչ եթէ մարմնոյն ինչ ձրիւք, այլ վասն սկզբնականն շնորհաց։

Յաւել և զվսեմական բացատրութիւնն որովք վկայեցին 'ի Ճառս բանից Անարատ Յղութեան՝ թէ տեղի ետ շնորհաց բնութիւն և զդողանի հարեալ զկայ էառ ոչ համարձակեալ այլ ևս յառաջ խաղալ. քանզի Կուսի Մօրն Աստուծոյ չէր պարտ յղանալ յԱննայէ չև շնորհաց տուեալ զպտուղ իւր. քանզի պարտ և պատշաճ իսկ էր զի որ զանդրանիկն արարածոց ունէր յղանալ, անդրանիկ և ինքն 'ի դստերս յղասցի։ Վկայեցին զի մարմին Կուսին առեալ յԱդամայ ոչ և զբիծ Ադամայ եբեր յինքեան. այսորիկ աղագաւ աստուածաստեղծ իսկ խորան է Կոյսն Երանելի, կազմեալ 'ի Հոգւոյն սրբոյ, գործ արդարև ծիրանի զոր նորն այն Բեսելիել գեղապաճոյճ զարդարեաց, և դրուագեաց ոսկւով. և է իսկ և փառաւորի ըստ արժանւոյն իբրև առաջին և բուն իսկ գործ Աստուծոյ, որ 'ի հրեղէն նետից անտի բանսարկուին գտաւ պատսպարեալ, գեղեցիկ 'ի

բնութենէ և յամենայն արատոյ ազատ 'ի գլխովին, իբրև զայդ ամենապայծառ էկն յաշխարհ անարատ անդուստ 'ի Յղութենէն։ Ընդատեհ իմն ապաքէն անօթոյն ընտրութեան աղտեղութեամբք հասարակաց զգածիլ, քանզի գեր 'ի վերոյ գլեալ զամենեքումբք, հաղորդակից բնութեանն՝ այլ ոչ և յանցանացն եկաց. նա մանաւանդ պարտ և պատշաճ իսկ էր Միածնին զի որպէս յերկինս զՀայր նորա սերովբէք երեքսրբենիւ երգաբանեն, սապէս և յերկրի Մայր նորին և ոչ ընդ մի վայրկեան անման յանարատութենէ սրբութեանն ելցէ գտեալ։ Այս վարդապետութիւն այնպէս իմն գրաւեալ կալեալ է զմիտս և զոգի երիցագունիցն՝ մինչև նոր իմն և չքնաղ յեղանակ բացատրութեան զօրացաւ առ նոսա որով զՄայրն Աստուծոյ ստէպ յաճախութեամբ անարատ կարդացին և ամենևին անարատ. անմեղ, և ամենևին անմեղ. անապական, և անապական ըստ ամենայն մասանց. սուրբ և զերծ ամենևին յամենայն արատոյ մեղաց, բոլորովին մաքուր, անբիծ գլխովին, նա մանաւանդ մաքրութեան և անմեղութեան տիպար, գեղեցիկ յոյժ քան զգեղ, քան զչքնաղն չքնաղագոյն, սուրբ 'ի վեր քան զսրբութիւն, և միայն սուրբ և ամենամաքուր 'ի հոգի և 'ի մարմին, որ առ ամենայն լրութեամբ և կուսութեամբ գտաւ գերազանց, և ինքն միայնակ ամենայն շնորհաց հոգւոյն օթևան. որ բայց յԱստուծոյ միայնոյ ամենեցուն եկաց վերհագոյն, և քան զքերովբէսն և զսերովբէս և զզօրութիւնս հրեշտակաց աքանչելի բնութեամբ, կատարեալ և սրբագոյն քան զնոսա, որպէս զի ոչ հողեղինացն և ոչ երկնաւորացն լեզուք բաւական են 'ի նորա գովաբանութիւն։ Այս ձև բանից որպէս յայտ է ամենեցուն, և 'ի յիշատակարանս անգամ սրբոյ Պատարագին և աստուածային պաշտամանցն բնականագոյնս իմն էանց. և ամենայն ուրեք ընդ առաջ ելանէ և ծայր 'ի ծայր տիրեալ ունի 'ի նոսա, քանզի յօգնութիւն կարդան զՄայրն Աստուծոյ, գովեն իբրու միակ աղաւնի անտխեղծ գեղեցկութեամբ, մշտափթիթ վարդ, անապական ամենայն իրօք, և անարատ ցանգ և միշտ երանելի. հռչակեն զարձեալ իբրև անմեղութիւն որ չարատեցաւ երբէք, և երկրորդ Նուա որ ծնաւ զանմանուէլ։

Այս զինչ զարմանք իցեն զի հովիւքն Անկեղեցւոյ և ժողովուրդք հաւատացելոց փառս անձանց համարեալ իցեն հանապազ եռանդեամբ մեծաւ և բարեպաշտօն սիրով զԱնարատ Յղութեան Աստուածամօր Կուսին դաւանել զվարդապետութիւն, որ ըստ մտաց Հարց յեռեալ 'ի սրբազան Ցառան, և այնչափ մեծապանծ վկայութեամբք նոցին աւանդեալ, յայնքանեաց յիշատակարանաց պատկառելի հնութեան բացայայտս քարոզեալ, և 'ի գերահռչակ և 'ի խոհականագոյն դատաստանաց անտի Անկեղեցւոյ առաջարկեալ և հաստատեցաւ, եթէ՝ ոչ ինչ այլ այնպէս քաղցր և սիրելի առ նոսա ընծայիցի՝ որպէս պատուել յամենայն վայրի, և յարգել և խոստովան լինել և քարոզել եռանդեամբ սրտիւ զԱստամայրն Աստուծոյ յղացեալ առանց սկզբնական արատոյ։ Զան որոյ և

սրբազան առաջնորդք, և մեծամեծար աղք յուխտէն Անկեղեցւոյ, և կարգք կրօնաւորաց, ինքնակալք անգամ և թագաւորք 'ի կանուխ ժամանակաց աղերս առ Պահն սուրբ արկանէին զի ընդ վարդապետութիւնս ուղղափառ հաւատոց սահմանեսցի և Ընարատ Յղութեան Որդն Աստուծոյ։ Նոյն աղերսք յաճախեցին և առ մերովք ժամանակօք, և մանաւանդ առ քարեաց յիշատակաց արժանի Գրիգորիոս Դ.Օ., և առ մեզ գլխովին յեպիսկոպոսաց և 'ի ժառանգաւորաց Անկեղեցւոյ, և 'ի կրօնաւորեալ եղբայրութեանց և 'ի թագակալ իշխանութեանց և 'ի հաւատացեալ ժողովրդենէ։

Եւ մեր զայս ամենայն յանզուգական խնդութիւն սրտի մերոյ գիտելով, և իսկական մտօք 'ի կշիռ արկեալ, այն ինչ լինէր մեզ յաստուածադիր Յառաջախնամութենէ անտի (թէպէտ և անարժանապէս) 'ի գերագահ Աթոռս այս Ելանել Ս. Պետրոսի, և զԱնկեղեցւոյ համօրէն բառնալ յանձին զտեսչութիւն՝ առ մեծի յարգանացն և պաշտօնասէր գորովոյ զոր անդուստ 'ի մատաղ տիոց առ Սրբուհի Կոյս Մայրն կալեալ է մեր, ոչ այլ ինչ այնպէս ցանկալի էր մեզ քան թէ յամբոկ անդր ժամանեցուցանել զոր ինչ մնայրն տակաւին յըղձից անտի Անկեղեցւոյ, զի յաճախեսցեն փառք սրբոյ Կուսին, և ձրից շնորհացն նորա պայծառագոյն ևս փայլեսցէ լուսաւորութիւն։ Այլ սակայն զի հասուն խորհրդով լեցի մեզ յառաջ խաղալ՝ առանձին իմն առ 'ի դոյն պէտս հաստատեցաք ժողով մեծապատիւ եղբարց մերոց Նիրանաւորաց սրբոյ Անկեղեցւոյն Հռովմայեցւոց, աղք ականաւորք աստուածպաշտութեամբ և խոհականութեամբ և աստուածայնոցն առհասարակ գիտութեամբք, և 'ի ժառանգաւորաց անտի Անկեղեցւոյ, և 'ի կարգաց կրօնաւորաց ընտրեցաք զՀմտագոյնսն աստուածաբանական մակացութեանց, զի խնամով 'ի քնին առցեն զոր ինչ միանգամ յԸնարատ Յղութիւն Կուսին պատշաճիցին բանք, և զխորհուրդս իւրաքանչիւր ծանուսցեն մեզ։ Եւ թէպէտ 'ի խնդրուածոց անտի մեզ մատուցելոց զի վաղ ընդ փոյթ սահմանեսցի Յղութիւնն Ընարատ՝ ծանօթ էր մեզ բազմագունիցն 'ի հովուաց Անկեղեցւոյ հաւանութիւն, համայն և այնպէս կամ եղև մեզ 'ի Պայետա 'ի հազարերորդի ութհարիւրերորդի քառասներորդի ինեներորդի ամին որ օր երկրորդ էր ամսեանն Փետրուարի, թուղթս հանրականս առ համօրէն պատուական եղբարս մեր Եպիսկոպոսունս տիեզերական ուղղափառութեան առաքել, որպէս զի յետ զաղօթս իւրեանց առ Աստուած բազմացուցանելոյ՝ նշանակեսցեն մեզ թղթով եթէ որպիսի ինչ հօտին իւրեանց պաշտօնասէր եռանդն լեցէ առ Ընարատ Յղութիւն Աստուածամօր Կուսին, և մանաւանդ յո՛ր կարծիս բերիցին ինքեանք իսկ եպիսկոպոսունք 'ի հրատարակել զսահման իրիդ, և զինչ իղձք իցեն նոցա, որպէս զի լեցի և մեզ զգերագոյնն մեր դատաստան ըստ կարի մեծահանդէս շքեղութեամբ հրապարակել։

Ոչ դոյզն խնդութիւն եղև մեզ և մխիթարութիւն յորժամ 'ի պատուական

եղբարց անտի մերոց զպատասխանին ընկալաք։ Զանգի անպատմելի ինն զուարթութեամբ և բերկրալից փութով պատասխանի արարեալ առ մեզ ոչ միայն զառանձին սէր և զյօժարութիւն իւրեանց և զուխտին Եկեղեցւոյ և զհաւատացելոց հաւատարմացուցանէին մեզ վերատին, այլ և իբրև 'ի միջէ բարբառոյ պաղատանս առ մեզ մատուցանէին, զի վերհագոյնս մեր դատաստանաւ և իշխանութեամբ Ընարատ Յղութիւն Կուսին սահմանեսցի։ Ոչ ինչ ընդհատ ցնծացաք 'ի հոգի մինչ և եղբարքն մեր պատուականք սրբոյ եկեղեցւոյն Հռոմայ Ներիրանաւորք՝ որք 'ի վերոյիշեալն այն դումարեալ էին ժողով, որպէս և յիշատակեալ Ընտուածքանքն խորհրդականք ընտրեալք առ 'ի մէջն, հաւասարաջան երդութեամբ և խնամովք յետ հատուն և մտադիր քննութեան, աղերս առաջի մեզ արկին սահմանել զՆարատ Յղութիւն Որդն Ընտուծոյ։

Զան որոյ մեր ընդ լուսափայլ հետս Նախորդացն մերոց գնացեալ, և ցանկացեալ ըստ կարգի և ուղղութեամբ յառաջ ընթանալ, ժողով կոչեցաք, և 'ի նմին խօսեցաք ընդ պատուական եղբարս մեր Ներիրանակիրս Հռովմէական սուրբ եկեղեցւոյ, և մեծաւ մխիթարութեամբ սրտի լուաք զնոցա խնդրել առ 'ի մէջն զի հաճեսցուք սահմանել զվարդապետութիւն Նարատ Յղութեան Ընտուածամօր Կուսին։

Իսկ մեր մեծապէս վստահացեալ յԸնտուած եթէ այսուհետև հասեալ լցէ դէպ ժամանակ սահմանելոյ զՆարատ Յղութիւն Ընտուածամայր Կուսին, որ 'ի Գրոց անտի սրբոց, յակնածելի հնութենէ, յանայլայլակ մտաց Եկեղեցւոյ, 'ի հրաշալի ինն համակամութենէ դիտապետաց, և ուղղակրօն հաւատացելոց, և 'ի մեծամեծ գործոց և սահմանադրութեանց անտի Նախորդացն մերոց լուսաբանեալ է սքանչելապէս և բացայայտեալ. մեծախնամ փութով կշռադատեալ զայս զամենայն, և աղօթս անդադարս և եռանդագինս սրտի առ Ընտուած ուղղեալ, համարեցաք զի չէ արժան յապաղել այսուհետև կնքել և սահմանել վերհագոյն մեր դատաստանաւ զԿուսամօրն Նարատ Յղութիւն. և հաճել սովին զբարեպարիշտ իղձս ուղղափառութեան և զսէր մեր որ առ նա ինքն սուրբ Կոյսն, և միանգամայն Նովաւ և ևս փառաւորել զՈրդին իւր Միածին զՏէր մեր Յիսուս Քրիստոս. փոխանակ զի ՅՈրդին անդր վերանան որ ինչ առ Մայրն պատիւ և փառատրութիւնք։

Որդ քանզի ոչ դադարեցաք ընաւ երբէք խոնարհութեամբ և պահովք մատուցանել Ընտուծոյ Հօր 'ի ձեռն Որդւոյն իւրոյ զմեր առանձին և զհասարակաց Եկեղեցւոյն պաղատանս, զի արժանի արասցէ զեկավարեալ զմիտս մեր պնդել զօրութեամբ սրբոյ Հոգւոյն, յօգնութիւն կարդացեալ զերկնաւորացն նահապետութիւնս, և լալահառաչ աղերսելով զՄխիթարիչ սուրբ Հոգին, նորուն իսկ այսպէս 'ի մեզ ազդելով, 'ի փառս սուրբ և անբաժանելի Երրորդութեան, 'ի վայելչութիւն և 'ի պայծառութիւն Կուսի Ընտրն Ընտուծոյ, 'ի բարգաւաճանս

ՀՍՍՌ ԳԱՊ
Ա. Մասեանի անվան

ուղղափառ հաւատոց, և յաճուն քրիստոնէական կրօնիցս, իշխանութեամբ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, երանելի Առաքելոցն Պետրոսի և Պաւղոսի, և Աերոլս, վճռեմք, հրատարակեմք և սահմանեմք՝ զի վարդապետութիւնն այն որ ուսուցանէ զամենօրհնեալ Կոյսն Մարիամ անդստին յառաջնմէ վայրկենէ Յղութեան իւրոյ առանձին ինն շնորհօք և պարգևօքն Աստուծոյ ամենակալի, վասն արժանեաց Յիսուսի Քրիստոսի Փրկողի ազգի մարդկան, աղատ պահեալ յամենայն արատոյ սկզբնական մեղաց, յԱստուծոյ ինքնին յայտնեալ է, վասն որոյ և հաւատացելոց ամենեցուն պարտ հաւատալ այնմ անդրդուելի հաստատութեամբ։ Որոյ վասն եթէ յանդգնեսցի ոք, որ քաւ 'ի Տեառնէ, այլազգացոյս ինչ իմանալ 'ի սրտի իւրում քան զոր առ 'ի մէնջն սահմանեցաւ, ծանիցէ և հաստատեալ գիտասցէ զի ինքն 'ի դատաստանէ իւրմէ դատապարտեալ, նաւակոծի 'ի հաւատն, 'ի միութենէ Եկեղեցւոյն քակեալ. և վասն այնորիկ անկանիցի ընդ պատժովք՝ զոր կնքեն իրաւունք, եթէ զոր խորհին 'ի սրտի ժպրըհեսցի միանգամ 'ի ձայնէ կամ գրով և կամ որ ինչ այլ արտաքին օրինակաւ յայտնաբանել։

Արդարև լի է բերան մեր ցնծութեամբ, և լեզու մեր լիապատար զուարճութեամբ, և խնարհ և անսպառ գոհութիւնս մատուցանեմք և մատուցուք հանապազորդ առ Տէրն մեր Յիսուս Քրիստոս, զի նորահրաշ գթութեամբ իւրով շնորհեաց անարժանութեանս մերում ընծայել և հաստատել զայս պատիւ և զփառս և զգովութիւն առ ամենասրբուհի Մայրն իւր։ Եւ աներկբայ յուսացեալ եմք և լի եմք վստահութեամբ՝ եթէ Կոյսն ինքնին երիցս երանելի, որ գեղեցիկ ամենևին և Անարատ՝ զթիւնալից գլուխ դժնդակ օձին հարեալ խորտակեաց և փրկութիւնաբեր եկաց աշխարհի, որ տեսանողացն և առաքելոց պարծանք, նահատակացն փառք, և ամենայն սրբոց խնդութիւն և պսակ, ապաւէն անքոյթ վտանգելոց և հաւատարիմ օգնական, և տոհմի սեռի մարդկութեանս առ Որդին իւր Միածին հզօր բարեխօս և հաշտարար, և Եկեղեցւոյն սրբոյ զարդ և լուսապայծառ վայելչութիւն և ամուր պահապան, զհերձուածս ամենայն վանեալ հանապազ խորտակեաց, և զհաւատացեալ զազգս և զժողովուրդս յամենապատիկ աղետից թափեալ ազատեաց, և զմեզ ինքնին առ հասարակ յամենայն վտանգից, որ շուրջ զմեզ պատեալ պաշարէին՝ փրկեաց, հաճեսցի հզօր պաշտպանութեամբ իւրով առնել՝ զի Սուրբ Կաթուղիկէ Եկեղեցին 'ի վերոյ քան զքնաւ խուչս անցեալ և մոլորութեանց ամենայնի յաղթական՝ 'ի մէջ համօրէն ազգաց և ամենայն ուրեք օր քան զօր ամրացեալ ծաղկեսցի և տիրեսցէ 'ի ծովէ մինչև 'ի ծով, և 'ի գետոց մինչև 'ի ծագս երկրի, և 'ի խաղաղութեան և 'ի դիւրի ազատութեան վայելիցէ, և ընկալցին մեղաւորք զթողութիւն, ախտաժէտք առողջութիւն, վատասիրք քաջալերութիւն, վշտացեալք միխիթարութիւն, վտանգեալք օգնականութիւն, և խոտորեալքն դարձցին 'ի Հանա-

պարհս Հշմարտութեան և արդարութեան, 'ի բաց մերժեալ յանձանց զմտացն մառախուղ, և լեցի մի հօտ և մի հովիւ։

Լուիցեն բանիցս մերոց ամենայն մանկունք կաթուղիկէ Եկեղեցւոյ առ 'ի մէնջ սիրելիք. և երկիւղածութեամբ, հաւատովք և սիրով՝ աւուրց յաւուրս բորբոքեալ՝ ջան 'ի մտի դնիցեն մեծարել, կարդալ և պաղատել առ երջանիկ Կոյսն Մարիամ Մայր Աստուծոյ առ յղացեալն առանց սկզբնական արատոյ, և առնա ինքն քաղցրագութ Մայրն ողորմութեան և շնորհաց դիմեսցեն 'ի վտանգս առ հասարակ, յանձկութեան, 'ի կարիս, 'ի վարանական տագնապսն և յերկկիւղի։ Զի չէ պարտ երկնչել յիմեքէ, կամ յուսահատ լինել յորժամ նա ինքն ինչ առաջնորդ, նա ինքն օժանդակ, նա ինքն օգնական, նա ինքն պաշտպանութիւն։ Նորա զի արդարև մայրենի է սիրտն առ մեզ, և ինքնին խնամեալ ըզգործս փրկութեան մերոյ, գորովի 'ի վերայ ամենայն ազգի մարդկան, և դշխոյ և տիրուհի կացեալ 'ի տեառնէ երկնի և երկրի, և գերազանց քան զհրեշտակացն դասապետութիւնս և քան զպարս սրբոց, կայ յաջմէ Միածնին իւրոյ Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ, և զմեծազօր պաղատանս իւր մայրենիս արկանէ առաջի, և ընդունի զոր խնդրէն, քանզի չիք խնդրուածոյ նորա դառնալ ընդունայն։

Հուսկ յետոյ առ ծանօթագոյնս գործել Եկեղեցիս տիեզերաց զտուեալս առ 'ի մէնջ զայս սահման Անարատ Յղութեան երանելւոյ Կուսին Մարիամու, կամ եղև մեզ զԱռաքելականս մեր զայս Թուղթ 'ի մշտնջենաւոր յիշատակ եղելոցն կարգել. հրամայեալ զի յառնուլ անդ զհաւասար սորին կամ 'ի տպագիր իսկ օրինակս ձեռնադրեալս 'ի հասարակաց նոտարէ ումեմնէ, և կնքեալ յումեքէ 'ի պատուելոյ յեկեղեցական աստիճանս՝ նոյն հաւատք ընծայեսցի յամենեցունց, զոր ինչ ընծայէին այսր Թղթոյ՝ եթէ մատուցեալ էր նոցա և 'ի ցոյց ընծայեալ։

Մի՛ և մի՛ ոք իշխեսցէ երբէք պատառել զայս Թերթ մերոյ յայտարարութեանս, վճռոյս և սահմանադրութեան, կամ հակառակորդ նմին ելանել յաչխուռն ժպրհութեամբ։ Այլ. եթէ ոք առ 'ի դոյն անկղիտանալ համարձակիցի՝ դիտասցէ՝ զի զամենահզօրին Աստուծոյ զբարկութիւն և զսրբոց Աստուածոյ զառաքելոցն Պետրոսի և Պաւղոսի 'ի գլուխ իւր ածեալ կուտիցէ։

Տուեալ 'ի Հռովմայեցւոցն քաղաքի, մերձ 'ի Ս. Պետրոս, 'ի Զ իդուսի (ՅՈՀբերորդում աշուր) Դեկտեմբեր ամսեան, 'ի հազարերորդի ութհարիւրորդի յիսներորդի չորրորդի ամի մարդեղութեան Բանին, և մերոյ քահանայապետութեանս յիսներորդում ամի։

ՊԻՈՍ ՊԱՊ Թ